ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____2024թ. **N ---- -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի Ն 50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝ **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2024 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» Ն 50-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) Հավելվածի 3-րդ կետում «6-րդ կետի,» բառերը փոխարինել «6-րդ, 6.1-ին,» բառերով.

2) Հավելվածի 6-րդ կետից հետո լրացնել նոր 6.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«6.1. Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող աղբամանները կարող են Երևանի քաղաքապետի որոշմամբ առանց մրցույթի վարձակալության իրավունքով տրամադրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող տարածքներում տեղադրելու նպատակով:».

3) Հավելվածի 41-րդ կետից հետո լրացնել նոր 41.1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«41.1. Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող աղբամանների օգտագործման համար սահմանել ամսական վարձավճար՝ յուրաքանչյուր աղբամանի համար 75000 ՀՀ դրամ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 50-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկն իրականացնում է Երևան համայնքի տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները, որոնց ընթացքում օգտագործվում են Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող աղբամաններ:

Տևական ժամանակ բազմաթիվ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց սեփականության իրավունքով պատկանող տարածքներում աղբի հեռացման աշխատանքներն առավել արդյունավետ և դյուրին իրականացնելու համար դիմում են Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող աղբամանները վարձակալական պայմաններով ձեռք բերելու համար:

Վերոգրյալից ելնելով՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշմամբ նախատեսել հնարավորություն Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող աղբամանները ֆիզիկական և իրավաբանական անձանց վարձակալությամբ տրամադրելու համար՝ դրանց համար սահմանելով նաև ամսական վարձավճար՝ յուրաքանչյուր աղբամանի համար 75000 ՀՀ դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ